

**ԹՈՒՐՔ-ԹԱԹԱՐԱԿԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ) ՀԱԿԱՅԱՅԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ 1919 Թ. ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ
ՔՐԻՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԷԴԻՎ ՋՈՅՐԱԲՅԱՆ

1918 թ. հոկտեմբերի 30-ին Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս ծովածոցում «Ազամեննոն» ռազմանավի վրա կնքված զինադադարի համաձայնագրով Թուրքիան իրեն պարտաված էր ճանաչում և պարտավորվում զորքերը դուրս բերել օկուպացված տարածքներից, այդ թվում՝ Անդրկովկասի որոշ մասերից: «Թուրքական զորքերն արդեն ստացել են Անդրկովկասի մի մասը էվակուացնելու հրաման, - ասված է համաձայնագրի 11-րդ հոդվածում, - ընդ որում մնացած զորքերը կհեռացվեն, եթե տեղերում իրադրությունը ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ»¹:

Հոդվածի հենց նման ձևակերպումն էլ հնարավորություն է տալիս թուրք հրամանատարությանը ձգձգել էվակուացիան, իսկ որոշ տարածքներ ընդհանրապես պահել: Ահա օրինակ, ինչ է ասված թուրքերի այդ վարքագծի մասին Ստամբուլ՝ Հայաստանի պատվիրակ Թախթաջյանին դեկտեմբերի 7-ին ուղարկած Արշակ Ջամալյանի նամակում. «Հայ ժողովրդի մեջ սաստիկ հիասթափություն է առաջացել, որ դաշնակիցները Տաճկաստանի հետ զինադադար կնքելիս ոչ միայն որևէ շոշափելի պահանջ չեն ներկայացրել Տաճկաստանի վերաբերմամբ, այլև Ղարսի շրջանի էվակուացիայի հարցը բաց են թողել: Տաճիկները, որ համաձայն Ձեզ հայտնի պաշտոնական հայտարարության պետք է սկսած հոկտեմբերի 24-ից վեց շաբաթվա ընթացքում դատարկեին մեր երկիրը մինչև Բրեստի սահմանները, համաձայն իրենց յավաշ-յավաշի քաղաքականության դեռ մնում են մեր երկրի շատ վայրերում»²:

Անդրադառնալով թուրքերի իրականացրած թալանին՝ Ջամալյանը գրում է, որ նրանք իրենց հետևից թողնում են լիակատար ամայություն, որ նրանք տարել են այն ամենը, ինչը որևէ արժեք է ներկայացնում մեր ժողովրդի կամ պետության համար: «Նրանք տարել են ամբողջ հացը, անասունները, պատրաստի վառելիքը, պահեստների և խանութների ապրանքը, տների կահկարասին, պատուհանների փեղկերը, վառարանները, երկաթուղու սիմաֆորները, լապտերները, հեռագրաթելերը, շատ տեղերում հեռագրասյուները և այլն, և այլն»³, - գրում է Ջամալյանը և ավելացնում, որ գաղթականների վիճակը ուղղակի սարսափելի է, քանի որ նրանց մի

¹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1923-1928)», խմբ. պրոֆ. Ջոն Կիրակոսյանի, Եր., 1972, էջ 538:

² ՀԱԱ, ֆ. 200, ձ. 1, գ. 145, թ. 16:

³ Նույն տեղում:

զգալի մասը չի կարող վերադառնալ (արևմտահայերը, կարսեցիները, սուրմալեցիները և այլն), իսկ նրանք, ովքեր վերադարձել են, ենթակա են սովամահության կամ ցրտահարության:

1918 թ. ուշ աշնանը, Անդրկովկասից թուրքական զորքերի հեռանալուն զուգընթաց, արևելահայ գաղթականները սկսեցին վերադառնալ իրենց հարազատ վայրերը: Դա կատարվում էր այնպիսի հապճեպությամբ, այնքան արագ, որ ազգաբնակչությունը հաճախ առաջ էր անցնում հայկական զորքերից: Այդպես էր գործը Արարատյան դաշտում, Սուրմալուում, Շիրակում: Շարժվեցին նաև Կարսի մարզից գաղթածները, բայց հարկադրված եղան կանգ առնել Արփաչայի արևելյան ափին:

Վերն արդեն նշել ենք, որ Մուղրոսի զինադադարը Թուրքիային չէր պարտավորեցնում հետ քաշել իր զորքերը Կարսի և Բաթումի մարզերից, այլ այդ հարցի լուծումը թողնում էր դաշնակիցների ներկայացուցիչների հայեցողությանը, որոնք կարող էին այդպիսի պահանջ ներկայացնել տեղում իրադրությունը ուսումնասիրելուց հետո: Թե ինչու էր բրիտանական կառավարությունը նման որոշում ընդունել⁴, դժվար է ասել. դա այդ կառավարության գաղտնիքն է: Բայց որ դրանից իսկույն օգտվեցին թուրքերը, անվիճելի է: Մի շաբաթ էլ չէր անցել զինադադարի ստորագրումից, երբ Կարսում զուևարված մահմեդական առաջնորդների հավաքում, որին մասնակցում էին նաև թուրքական 9-րդ բանակի հրամանատար Շեքի փաշան և Կարսի սանջակի կառավարիչ Յիլմի բեյը, հայտարարվեց, որ չեն ճանաչի ու չեն ընդունի Հայաստանի և Վրաստանի իշխանությունը: Իսկ դեկտեմբերին ստեղծեցին այսպես կոչված «Շուրան», որը նախապատրաստեց մուսուլման առաջնորդների նոր հավաք (1919 թ. հունվարի 17-18), որտեղ և որոշվեց Կովկասի Հարավարևմտյան հանրապետություն ստեղծել⁵: Կարսում հավաքված հարյուրից ավելի հենց այս պատվիրակներն էլ հրահրեցին և կազմակերպեցին Կարսի թուրք բնակիչների բողոքի ցույցը Կարսի հայկական վարչության դեմ:

Բանն այն է, որ բրիտանական զեներալ Ուոկերը դեկտեմբերին Բաթումի մարզում անգլիական զեներալ-նահանգապետություն ստեղծելուց հետո՝ 1919 թ. հունվարին, որոշեց զբաղվել նաև Կարսով⁶ և ժամանելով Կարս (հունվարի 7-ին)՝ Շեքի փաշային ներկայացրեց ութ կետից բաղկացած հրահանգներ, որոնցով տեղեկացնում էր, որ Բաթումիի օրինակով մտադիր է մոտ օրերը Կարսում ևս ստեղծել զինվորական ու քաղաքացիական վարչություն, և որ վերջինս կներկայացնի Հայաստանը, որը կգործի իր կողմից նշանակված զինվորական նահանգապետի վերահսկողությամբ: Ուոկերը մի շաբթ այլ կարգադրություններ էլ արեց Շեքի փաշային (հայկական վարչությանը ըստ պատշաճի ընդունելու, ժողովրդի և

⁴ Մուղրոսի զինադադարը բացառապես անգլիական դիվանագիտության արգասիքն էր և նախապես չէր համաձայնեցվել դաշնակիցների հետ: Առանձնապես դժգոհեց Ֆրանսիան:

⁵ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920), Եր., 2011, էջ 175:

⁶ Հայաստանը և Վրաստանը, ինչպես նաև Բաթումի և Կարսի մարզերը զեներալ Ուոկերի իրավասությանն էր հանձնված, իսկ Ադրբեջանը և հյուսիսային Կովկասը՝ զեներալ Թոմսոնի:

գնացքների ազատ երթևեկության համար սահմանները բացելու, մինչև հունվարի 25-ը թուրքական զորքերը մարզից դուրս բերելու և այլն) ու վերադարձին Ալեքսանդրապոլում ՀՀ արտգործմինիստր Ս. Տիգրանյանի հետ ստորագրեց մի համաձայնագիր (հունվարի 8-ին), որով նախատեսվում էր Կարսի զինվորական նահանգապետին կից ստեղծել հայկական քաղաքացիական վարչություն:

Հունվարի 14-ին ներքին գործերի մինիստրի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը զեկուցեց իր կառավարությանը Ալեքսանդրապոլ կատարած այցելության և Կարսի քաղաքացիական վարչություն ստեղծելու իր կարգադրությունների մասին (նահանգի և շրջանների քաղաքացիական վարչություն, միլիցիայի և ժանդարմերիայի ստեղծում, Կարս-Ալեքսանդրապոլ երկաթգծի վարչության և ծառայողների շտաբի կազմակերպում և այլն), իսկ հունվարի 16-ին կառավարությունը կրկին անդրադարձավ Խատիսյանի զեկուցմանը և հաստատեց վարչության վերաբերյալ նրա ներկայացրած ցուցակը⁷:

Սակայն Կարսի կառավարունը հայկական վարչությանը հանձնելու այս առաջին փորձը անհաջող անցավ: Ինչպես արդեն վերը նշել ենք, թուրք և թաթար ազիտատորների հրահրանքով Կարսի մուսուլմանները բողոքի ցույց կազմակերպեցին, որի ժամանակ հնչում էին սպառնալիքներ հայերի հասցեին, պահանջ՝ Կարսի զինվորական նահանգապետ, գնդապետ Թենայերլեյից՝ վտարել հայկական վարչությունը Կարսից, որին իրենք չեն ենթարկվի: Եվ անգլիացի գնդապետը, որը պարտականություն ուներ պաշտպանելու ու հովանավորելու իր ենթակայության տակ աշխատող վարչությունը, կուլ է գնում թուրք-թաթարական ամբոխի բարձրացրած վայնասուևին ու սպառնալիքին և հայկական վարչությանը առաջարկում է հեռանալ Կարսից: Իսկ հունվարի 21-ին ՀՀ արտգործմինիստր Ս. Տիգրանյանին հասցեագրած նամակում Ուոկերը, հայտնելով այդ մասին, գրում է, թե «ցավոք սրտի ստիպված են չեղյալ հայտարարել մեր միջև կատարված կարգադրությունը: Ղարսի բրիտանական զինվորական կառավարիչին հրաման տվի ետ ուղարկել այդ ծառայողներին Ալեքսանդրապոլ»⁸ ու որպես պատճառ մատնանշում Կարսի մուսուլմանների խիստ շեշտված հակակրանքը հայերի նկատմամբ: Կարծես թե մինչև այդ ոչինչ չգիտեր թուրքերի հայատյացության մասին, չէր լսել 1915 թ. հայկական ջարդերի ու բռնագաղթի մասին կամ թեկուզ նախորդ տարի (1918 թ.) դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքի հետևանքով Կարսի մարզի հայ ազգաբնակչությանը պատճառված վնասների մասին (զաղթ, կոտորած և այլն), որի հետևանքն էին շուրջ 100 000 այն գաղթականները, որոնք, Արփաչայի ափին կուտակված, սպասում էին սահմանների բացմանը՝ իրենց հարազատ օջախներ վերադառնալու համար:

Զենք կարող զենեռալ Ուոկերին մեղադրել թուրքամետության մեջ, բայց որ նրա վարքագիծը գոնե առաջին այդ ամիսներին հայանպաստ չէր, անառարկելի է, և դա շուտով արտահայտվեց նաև Շարուրից հայկական

⁷ Մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», Եր., 2000, էջ 84:

⁸ Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 178:

գորքերի հետքաշման նրա պահանջում: Ուոկերը Ասսերի հետ միասին փետրվարի 7-ին առաջին անգամ ժամանեց Երևան և երկար զրույց ունեցավ մինիստր-նախագահ Յոզի. Քաջագունունու հետ, որին ներկա էին նաև արտգործմինիստր Տիգրանյանը, ռազմական մինիստր Յախվերդովը (Յախվերդյան) և ուրիշ պաշտոնատար անձինք: Ջրույցը հիմնականում ընթանում էր Շարուրից հայկական զորքերի հետքաշման շուրջ, և երբ Քաջագունունին առաջ քաշեց տեսակետ, որ հայկական զորքերի դուրսբերմանը պետք է նախորդի անգլիացիների երաշխիքը տեղում մնացած հայերի, ինչպես նաև փախստականների անվտանգության ապահովման հարցում, ապա դրան ի պատասխան Ուոկերը սկսեց սպառնալ Յայաստանի համար իր պետերին ուղարկվելիք անբարենպաստ զեկուցագրերով՝ միաժամանակ պահանջելով զորքերը հետ քաշել Շարուրից:

Ի դեպ, այդ զրույցի ընթացքում շոշափվեց նաև Կարս հայկական վարչությունն մտցնելու հարցը, որին ի պատասխան Ուոկերը մեղքը միակողմանի բարդեց հայկական վարչության պետի վրա՝ անվանելով նրան «վախկոտ ու անտակոտ» և ոչինչ չասելով այն մասին, որ իր կողմից Կարսի գինվորական նահանգապետ նշանակված գնդապետ Թեմպերլեյը ոչինչ չձեռնարկեց մոլեռանդ մուսուլմանական ամբոխին զսպելու ու կարգի հրավիրելու ուղղությամբ, այլև հենց ինքը առաջինը խորհուրդ տվեց հեռանալ Ալեքսանդրապոլ:

Ինչևէ, ավարտելով մեր խոսքը Կարսի մարզ հայկական վարչությունն մտցնելու առաջին անհաջող այս փորձի մասին, հարկ ենք համարում ընդգծել, որ այն ամբողջովին ընկած է բրիտանական հրամանատարության խղճին և հետևանք էր գեներալ Ուոկերի և գնդապետ Թեմպերլեյի ոչ այն է անվճռականության, ոչ այն է թրքամետության: Արդյունքում տուժեց Կարսի գաղթականությունը, որը ցրտի և սովի պայմաններում, մեծաթիվ զոհեր տալով, հարկադրված եղավ սպասել ևս երեք ամիս՝ մինչև ապրիլի վերջը, երբ գեներալ Թոմսոնի հրամանով Կարսի մարզը միացվեց Յայաստանին: Դա կատարվեց այսպես:

Մարտի վերջերին վարչապետ Քաջագունունին կանչվեց Թիֆլիս, որտեղ խորհրդակցություններ ունեցավ Թոմսոնի հետ՝ կապված Կարսի և Նախիջևանի գաղթականության թշվառ վիճակի հետ: Դրան հետևեց ապրիլի 6-ին ՀՀ վարչապետին Թոմսոնի ուղղած հետևյալ գրությունը.

«1. Ժողովրդի վերադարձը Կարսի և Նախիջևանի նահանգների գյուղեր ամենակարևոր հարցն է հանդիսանում: Այնտեղ, որտեղ հնարավոր չի լինի նրանց վերադարձնել սեփական գյուղերը, նրանց պետք է բնակության տեղ հատկացվի, ինչպես նաև պետք է հնարավորություն տրվի զբաղվելու գյուղատնտեսությամբ...

2. Գաղթականների վերադարձից հետո, որը ես հուսով եմ կավարտվի այս ամսվա վերջին, անգլիական զորքերը հետ կկանչվեն Կարսից և Նախիջևանից, բայց անգլիական միսսիան կմնա: Դրա համար էլ մինչև մայիսի 1-ը վարչություն պետք է կազմակերպվի ամեն մի շրջանում և պահպանվի անհրաժեշտ քանակությամբ հայկական զորքով...»⁹:

⁹ «Բանբեր Յայաստանի արխիվների», 1993, № 1-2, էջ 89:

Հաջորդ երկու կետերում գեներալ Թոմսոնը դատողություններ է անում այն մասին, որ գաղթականների վերադարձը պետք է կատարվի առանց բռնությունների և արյունահեղության, առանց կրոնական և ազգային խտրականության, միաժամանակ վերջում ավելացնում է, թե գեներալ Դևին գտնվում է Կարսում ու նախապատրաստական աշխատանքներ է տանում հայկական զորքերի անարգել մուտքը Կարս ապահովելու և Կարսի «Շուրան» վնասազերծելու ուղղությամբ:

Այս առաջարկությամբ Թոմսոնը փաստորեն ժամանակավոր սահմանագիծ է անցկացնում Հայաստանի և Ադրբեջանի միջև, քանի որ դրանում խոսվում է նաև Ղարաբաղը (նաև Ջանգեզուրը) Ադրբեջանի կողմից կառավարվելու մասին: Չնայած դրան՝ կառավարությունը ապրիլի 12-ի նիստում հավանություն է տալիս Թոմսոնի առաջարկությանը և նաև հայտնում իր ցանկությունը, որ անգլիական զորքերն ավելի երկար ժամանակով տարածաշրջանում մնան¹⁰: Որոշման մեջ խոսվում է նաև Կարսի, Շարուրի, Նախիջևանի «գինվորական պետքերի համար» ռազմական միմիստրությանը 5 մլն ռ. տրամադրելու, հինգ նոր վաշտեր կազմակերպելու (ծառայությունից ազատ մարդկանցից՝ տալով ամսական 300 ռ. ռոճիկ), Կարսի շրջանի համար կոմենդանտի պաշտոն սահմանելու, որի վրա կդրվեն և նահանգապետի պարտականությունները, Կարսում քաղաքացիական վարչություն կազմակերպելու և այլնի մասին¹¹:

Հայաստանի կառավարության այս որոշումը ստանալուն պես ապրիլի 14-ին Թոմսոնը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին (պատճենը Վրաստանի կառավարության նախագահին) հանձնեց մի գրություն, որում նա հայտնում էր իր վճիռը Վրաստանի և Հայաստանի միջև տարածքային սահմանագծման վերաբերյալ: Թոմսոնը գրում է. «Ձեր միջև վիճելի գոտում սահմանների ժամանակավոր որոշման և վարչության նշանակման վերաբերյալ ուղարկում եմ Ձեզ իմ որոշումը, որին Դուք համաձայնել եք ենթարկվել Ձեր կառավարությունից ստացած լիազորությամբ:

1. Ախալքալաքի գավառը կլինի Վրաստանի կառավարման տակ:

2. Արդահանի գավառի մի մասը, որը գտնվում է Քուռ գետի ձախ կողմում, ներառյալ և Արդահան քաղաքը, նմանապես կլինի Վրաստանի կառավարման տակ:

3. Բորչալուի գավառի մի մասը՝ ջրբաժանից հյուսիս, ներառյալ Ալավերդի գյուղը և երկաթուղային կայարանը, կլինի Վրաստանի կառավարման տակ:

4. Իսկ Բորչալուի գավառի մյուս մասը, որը գտնվում է ջրբաժանից հարավ, ներառյալ Սանահին կայարանը, կլինի Հայաստանի կառավարման տակ:

5. Կարսի և Կաղզվանի մարզերը կլինեն Հայաստանի կառավարման տակ:

6. Նախիջևանի գավառը՝ սահմանափակված հյուսիսային և հարավային ջրբաժաններով, ընդհուպ մինչև Ջուլֆա կայարանը, կլինի Հայաստանի կառավարման տակ:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, ք. 65:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

7. Օլթիի օկրուզը և Արդահանի մի մասը, որը գտնվում է Քուռ գետի աջ ափին, կենթարկվեն Բաթումի զինվորական նահանգապետին:

8. Սահմանները նշված են կցված քարտեզի վրա»¹²:

Ինչպես տեսնում ենք, Կարսի մարզից միմիայն Կարսի և Կաղզվանի գավառներն են տրվում Հայաստանին, իսկ Օլթին և Արդահանը՝ ոչ: Սա, ինչ խոսք, պետք է առաջացներ Հայաստանի կառավարության դժգոհությունը և առաջացրեց: Բայց նկատի առնելով գաղթականների խիստ ծանր վիճակը և շուտուփույթ նրանց հայրենի օջախներում բնակեցնելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի կառավարությունը անարդար բաժանման դեմ բողոքելով հանդերձ, ստիպված էր ընդունել Թոմսոնի գծած ժամանակավոր սահմանները (բացի Օլթիից և Արդահանից՝ Հայաստանի սահմաններից դուրս էին մնում նաև Ղարաբաղն ու Ջանգեզուրը, Ալավերդու և Ախալքալաքի շրջանները):

Թոմսոնը միաժամանակ գրում է, որ իր գծած սահմանները կրում են ժամանակավոր բնույթ, հետապնդում են կարգ ու կանոն հաստատելու նպատակ՝ մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը: Այնուհետև ավելացնում է, որ հիշյալ մարզերում կառավարումը պետք է մտցվի մայիսի 1-ից, որ այն պետք է կրի բացառապես քաղաքացիական բնույթ, որ այդ տեղերում պետք է պահվեն միայն նվազագույն քանակությամբ զորքեր՝ կարգը պահպանելու համար և այլն: Վերջին՝ 12-րդ կետում Թոմսոնը հույս է հայտնում, որ շուտով կստանա նրանց համաձայնությունը վերը շարադրված պայմանների վերաբերյալ¹³:

Ապրիլի 23-ին գեներալ Յոսեփյանցի զորամասը անգլիական ջոկատի ուղեկցությամբ անցավ սահմանը և շարժվեց դեպի Կարս: Հաջորդ օրը Կարս մտավ նաև Ստ. Ղորղանյանի գլխավորած վարչությունը: Դրանից առաջ գեներալ Դևին, կատարելով Թոմսոնի հրամանը, ձերբակալել էր «Շուրայի» անդամներին և ուղարկել Թիֆլիս: Այնպես որ, թե՛ հայկական զորքերի և թե՛ վարչության մուտքը խաղաղ ընթացք ունեցավ. դիմավորեցին աղ ու հացով: Հայկական զորքերի ներկայության շնորհիվ հիմնականում խաղաղ ընթացք ստացավ նաև գաղթականների վերադարձը:

Հայաստանի կառավարությունն իր սուղ միջոցներից վերադարձող գաղթականներին օգնություն էր ցուցաբերում: Մասնավորապես, մայիսի 3-ին միմիստր-նախագահի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի նախագահությամբ կառավարության նիստը լսեց խնամատարության միմիստրի առաջարկությունը Կարսի գաղթականների ներգաղթը կազմակերպելու համար 36 մլն 200 հազար ռուբլի հատկացնելու մասին հարցը և հաստատեց այն (15 մլն նախատեսվում էր փախստականներին մեկ ամիս խնամելու համար, 17 մլն 400 հազարը՝ ազգաբնակչության փոխարինաբար բաժանելու համար, զուևարներ էին նախատեսված նաև առողջապահության, վարչության 4 ամսվա ծախսերի համար և այլն)¹⁴:

Այսպիսի ընթացք ունեցավ Կարսի մարզի՝ Հայաստանին հանձնված գավառների համար վարչություն ստեղծելու և գաղթականների վերադար-

¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 191, թ. 34:

¹³ Տե՛ս նույն տեղը:

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 89:

ծի հարցը, այսպես Կովկասի բրիտանական հրամանատարությունը խուզեց Հայաստանի իրավունքը Օլթիի գավառի և աջափնյա (Քուռ գետի) Արդահանի հարցում՝ միացնելով դրանք Բաթումի գեներալ նահանգապետությանը, դրանով իսկ տուրք տալով այդ գավառների մահմեդականության հակահայկական նկրտումներին:

* * *

Սուդրոսի զինադադարի համաձայն, ստիպված լինելով թողնել Անդրկովկասի օկուպացված տարածքները, թուրքական հրամանատարությունը հոգ էր տարել նաև Շարուր-Նախիջևանի մասին և հապճեպորեն կազմավորել էր այսպես կոչված Արագոայանի և Նախիջևանի հանրապետությունները, որոնք հետո միավորվեցին Արաքսյան անվանված հանրապետության մեջ: Այս վերջինն իր կազմի մեջ էր համարում ոչ միայն Շարուրն ու Նախիջևանը, այլ նաև Վեդիբասարն ու Ջանգիբասարը, անգամ ամբողջ Սուրմալուի գավառը: Նպատակը պարզ էր. ինքնորոշման շղարշ տալով այս կազմավորմանը՝ խոչընդոտել պանթուրքիզմի ծրագրերի տեսակետից խիստ կարևոր նշանակություն ունեցող այս տարածքների միացմանը Հայաստանին: Լավ հասկանալով այդ նոր կազմավորումների ռազմական պաշտպանվածության անհրաժեշտությունը՝ թուրքերը թողել էին նաև մեծ քանակությամբ զենք, զինամթերք, մի խումբ սպաներ Խալիլ բեյի գլխավորությամբ, շուրջ 700 ասկյարներ: Կազմավորված տեսք տալու նպատակով ստեղծվեցին նաև մեջլիս, կառավարություն, ոստիկանություն և գանձատուն:

Արարատյան դաշտավայրից ու Շարուր-Նախիջևանից օսմանյան զորքերի հեռանալուն զուգընթաց հայկական զորքերն ու նրանց հետևից գաղթականները շարժվեցին դեպի իրենց բնակավայրերը: Եվ չնայած Վեդիբասարի և Արագոայանի մահմեդականների դիմադրությանը՝ արդեն դեկտեմբերի սկզբին հայկական զորքերը հասել էին Արարատյան դաշտը Շարուրից բաժանող «Գայլի դրունք» կոչվող վայրը: Սակայն դեկտեմբերի կեսերին սկսված հայ-վրացական պատերազմը (դեկտ. 13-31) հարկադրեց մեր հրամանատարությանը որոշ զորամասեր փոխադրել հյուսիս, իսկ տեղում մնացած հայկական ուժերը հետ քաշել Դավալու (այժմ՝ Արարատ): Դա բավականին ծանր վիճակ ստեղծեց գաղթականների համար: Երևանից և նրա շրջակայքից տեղաշարժված գաղթականությունը (ավելի քան 5000 հոգի) ստիպված եղավ կանգ առնել Դամարլուում (այժմ՝ Արտաշատ), Դարալագյազում ապաստանածները նմանապես չկարողացան անցնել Նախիջևան, նույնը Ջանգեզուրից և այլ վայրերից: Եվ վրա հասած ձմեռվա պայմաններում գաղթականության վիճակն ավելի վատացավ, սովն ու համաճարակային հիվանդություններն իրենց սև գործն էին անում: Ահա թե ինչ է ասված 1919 թ. հունվարի առաջին օրերին Դամարլուից ստացված մի հաղորդագրությունում. «Մահացությունը գնալով մեծանում է, օրական 70 հոգու է հասնում... օգնություն՝ զոնե մեռնողներին թաղելու համար, որ այնքան շատ են ու թաղողներ էլ չկան և բոլորը նախիջևանցիներ են»¹⁵ (ընդգծումը մերն է - Է. Ջ.):

¹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 90:

Ստեղծված պայմաններում գաղթականներին սովամահությունից փրկելու միակ միջոցը Շարուր-Նախիջևանի շուտափույթ գրավումը և նրանց իրենց բնակավայրեր վերադարձնելը կլիներ: Ահա թե ինչու Հայաստանի կառավարությունը հայ-վրացական պատերազմն ավարտվելուց անմիջապես հետո իր հրամանատարությանը կարգադրում է զորքեր կենտրոնացնել Դավալուում: Սակայն «Արաքսյան հանրապետության» ղեկավարությունը դիմում է դիվանագիտական խորամանկության. առաջարկում է ուժի չդիմել, այլ 8-10 օր ժամանակ տալ բնակչությանը համոզելու և հայկական վարչությունը խաղաղությամբ ընդունելու համար: Եվ տպավորություն թողնելու համար թուրքերը որոշ քայլեր անում են: Ահա, օրինակ, ինչ է ասված գնդապետ Դուրխանյանի հունվարի 13-ի հեռագրում. «Փոխգնդապետ Շահբաղովից ստացել են նամակ հետևյալ բովանդակությամբ. «Խնդրում են ձեզ հայտնել կառավարությանը, որ **Սադարակի և Գայլի դրունքի մաքրման մասին բանակցությունները հաջողությամբ են ընթանում: Նախիջևանցիները ու շարուրցիները համաձայն են Հայաստանի համար անհապաղ ուղարկել հաց, բրինձ և այդ շրջաններում եղած մանուֆակտուրան: Մանրամասն տեղեկություններ կհաղորդի Նախիջևանի հատուկ սուրհանդակը, որին սպասում են հունվարի 14-15-ին**»¹⁶ (ընդգծումը մերն է - Է. Չ.):

Նման հաղորդումների արդյունքը լինում է այն, որ կառավարությունը հրամայում է զորքերին առաջ չշարժվել Դավալուից և սպասել նոր կարգադրության: Մինչդեռ խորամանկ թուրքերը այդ ժամանակամիջոցը օգտագործեցին մի կողմից իրենց պաշտպանությունը ամրապնդելու, իսկ մյուս կողմից Անդրկովկասի բրիտանական հրամանատարության հետ բանակցություններ վարելու համար՝ խնդրելով թույլ չտալ հայկական զորքերի մուտքը երկրամաս: Եվ հաջողության հասան: Հունվարի 19-ին գեներալ Ուոկերի ուղարկած հանձնախումբը կապիտան Լաութոնի գլխավորությամբ ժամանում է Նախիջևան և կողմերին զինադադարի առաջարկություն անում, ըստ որի՝ հայկական զորքերը պետք է Դավալուից առաջ չանցնեն: Դա արվել էր առանց Հայաստանի կառավարության հետ խորհրդակցելու, ինչը վիրավորական էր, և բնական էր, որ վերջինս բողոքեր նման վերաբերմունքի համար:

Հունվարի 26-ին Հայաստանի վարչապետին ուղարկած նամակում անդրադառնալով կապիտան Լաութոնի գործունեությանը՝ գեներալ Ուոկերը գրում է. «Նա տեղեկացնում է, որ իր հասնելու ժամանակ կռիվը շարունակվում էր և որ նա կարգադրել է իր կողմից նախագծված մի զինադադար երկու կողմերի միջև: Սույն զինադադարի պատճենը կցվում է ի տեղեկություն Ձեզ: Այդ զինադադարը որոշում է ընդհանուր կերպով սահմանագիծը երկու կողմերի զորախմբերի միջև»: Նամակի շարունակությունից պարզ է դառնում, որ Ուոկերը մտադիր էր այստեղ ևս ստեղծել անգլիական գեներալ-նահանգապետություն: «Ես տեղեկացնում եմ ֆորմալ կերպով Հայկ. Հանրապետության կառավարությանը - ասված է նամակում, - որ մտադիր եմ վերցնել կառավարությունն այն երկրամասի, որ ընկած է

¹⁶ Նույն տեղում, թ. 14: Տե՛ս նաև **Է. Ա. Չոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918-1920), Եր., 2002, էջ 43:

հիշյալ գծի հարավային կողմը և թուրքական սահմանի հյուսիսում՝ մինչև որ խաղաղության կոնֆերանսը կորոշի նրա ապագան: Խնդրո առարկա եղող գավառը պետք է կառավարվի իմ (հսկողության) տակ կապ. Լաութոնի կողմից գնդապետ-լեյտենանտի աստիճանով, որին աջակցելու է իր կողմից ընտրված վարչական կազմը: Ջինվորական նահանգի ճշգրիտ սահմանները պիտի որոշվի լեյտ. գնդապետ Լաութոնի կողմից՝ գլխավորապես նկատի ունենալով այն գավառները, ուր մուսուլման և ոչ-հայ բնակչությունը կազմում է մեծամասնություն»¹⁷:

Ահա այսպես Անդրկովկասի բրիտանական իշխանությունները իրենց իրավունք են վերապահում Հայաստանից անջատել բոլոր «այն գավառները, ուր մուսուլման և ոչ-հայ բնակչությունը կազմում է մեծամասնություն» և միմիայն «Ֆորմալ կերպով տեղեկացնել հայկ. Հանրապետության կառավարությանը» այդ մասին: Բայց նույն կերպ չեն վարվում ո՛չ Վրաստանի և ո՛չ առավել ևս Ադրբեջանի հետ: Այդ նույն հունվարին ամբողջովին հայաբնակ Ախալքալաքը դրվեց Վրաստանի գերիշխանության տակ, իսկ Լոռին բաժանվեց երեք մասի, և միայն հարավային մասը հանձնվեց Հայաստանին: Վրաստանից չանջատվեցին ոչ վրացական բնակչությամբ մյուս տարածքները ևս: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նրան ավելի էին սիրաշահում ոչ միայն Կարսի մարզի ու Շարուր-Նախիջևանի հարցում, այլև Լեռնային Ղարաբաղի ու Ջանգեզուրի, որի հայ ազգաբնակչությանն այդ նույն օրերին հրամայում են ենթարկվել Ադրբեջանի գերիշխանությանը և հայատյաց խոսքով բեկ Սուլթանովին նշանակում նահանգապետ: Ստացվում է, որ հայերի վրա մահմեդական նահանգապետ նշանակել կարելի էր, իսկ մահմեդականների վրա հայ նահանգապետ՝ ո՛չ: Այսպիսին էր Անդրկովկասի բրիտանական իշխանությունների մտայնությունը:

Ինչևէ, դառնալով Լաութոնի գործունեությանը Նախիջևանում և նրա ներկայացրած զինադադարի պայմաններին, հարկ ենք համարում նշել, որ դա այնքան էր խրախուսել մահմեդական անջատողականներին, որ նրանք որոշեցին դուրս քշել հայերին նաև Դավալուի և Վեդիբասարի շրջաններից ու հունվարի 27-ին ընդհանուր ապստամբություն սկսեցին նշված վայրերում: Այդ օրը՝ երեկոյան ժամը 7-ին, փոխգնդապետ Կարաքեչիշևը Դավալուից հեռագրում է դիվիզիայի հրամանատարին, որ «Շիրազլու, Օվչար, ճաթղճան, Կարալար գյուղերի թաթարները օգնություն ստանալով Բեյութ-Վեդիից, Շիխլարից և Շիդլուից, մոտ ժամը 16-ին հանկարծակի հարձակվեցին այդ պունկտերում գտնվող միլիցիայի և զորամասերի վրա: Այդ պունկտերի պարետների հաղորդմամբ, այդ գյուղերում մարտը ընդունելու անհնարինության և մութը վրա հասնելու պատճառով, մեր զորամասերը քաշվել են ծայրամասերը և ամրացել այդ տեղերում: Դրությունը վերականգնելու նպատակով այստեղից ուղարկել են օգնություն, իսկ Դամարլուից 2-րդ գնդի մի վաշտ: Խնդիր են դրել լուսաբացին վերականգնել դրությունը...»¹⁸:

Սակայն դրությունը վերականգնելը հեշտ չէր: Շարուրից և Նախիջևանից օգնության հասած ուժերը համառ դիմադրություն են ցույց տալիս:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 24:

¹⁸ Նույն տեղում, գ. 212, թ. 36:

Օգնության են հասնում նաև Շարուրում գտնվող 700 օսման ասկյարները: Արխիվներում պահպանվել են երկու համառոտ ամփոփագրեր հունվարի 28-30-ի մարտական գործողությունների մասին, որոնք և ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը: «Հունվարի 28-ին թաթարները կենտրոնացան Խալիսա գյուղում, դիրքեր գրավեցին և կրակ բացեցին մեր զորքերի վրա: Թշնամական գործողություններին վերջ տալու առաջարկը թաթարները մերժեցին: Բեյուք-Վեդի գյուղի կողմից թաթարական զինված ավազակախմբերը գրավեցին նշված գյուղից հարավ գտնվող սարավանջերը և հրացանածոթյուն սկսեցին մեր զորամասերի հետ... Հունվարի 28-ի առավոտյան կռիվ էր գնում Կարալար գյուղի մոտ: Մեր կորուստները կազմում են 5 սպանված և 3 վիրավոր: ...Հայկական 3-րդ զնդի հրամանատարի լրացուցիչ տեղեկություններով մեր զորքերը վերցրել են Խալիսա գյուղը: Թաթարները փախել են դեպի Շիդլու գյուղը և Արաքս՝ հետապնդվելով հրետանային և հրացանային կրակով...»¹⁹:

Մյուս համառոտ ամփոփագիրը վերաբերում է հայկական զորքերի հունվարի 29-30-ի գործողություններին: «Հունվարի 29-ին մեր կորուստները կազմել են 4 զինվոր սպանված և 8 վիրավոր, - ասված է այնտեղ: Հունվարի 29-ին ժամը 8-ի մոտ Կարալար գյուղը գրավվեց մեր միլիցիոներների կողմից, բայց կայազորի փոքրաթիվ լինելու պատճառով հարկադրված էին հետ քաշվել: Ժամը 15-ին գրահագնացքի ժամանելուց հետո Կարալարը վերջնականորեն անցավ մեր ձեռքը...: Հունվարի 30-ին կռիվը ընթանում էր Կարաբաղլարի շրջանում: Հարձակվում են սասունցիները, Կաֆիկի մարդիկ ղարաբաղցիների հետ երկու թնդանոթով հարձակվում են Ենգիջայի վրա: Ճանապարհը դեպի Դավալու բացված է: 3-րդ զուհը առաջավոր մասերով առաջ է քաշված դեպի Ենգիջա գյուղը: Մեր հրետանին հրետակոծում է Թոթանը Բոյուք-Վեդիի մոտ: Շիխլարից և Կարալարից դուրս քշված թաթարները անրանում են գերեզմանոցում: Թաթարների մեծ կուտակումներ են նկատվել Բեյուք-Վեդի-Ենգիջա-Թոթանի և Բոզ-Բուրունի արևելյան լանջին...»²⁰:

Հունվարի 30-ին Լաութոնը Նախիջևանից ժամանեց Դավալու և հայոց հրամանատարությանը կրակը դադարեցնելու հրաման տվեց: Բայց նույնը չարեցին մուսուլմանները և 31-ի առավոտյան հարձակվեցին Խալիսայի վրա՝ փորձելով ետ գրավել այն, իսկ փետրվարի 1-ին Ենգիջայի կողմից հարձակում սկսեցին Ղամարլուի ջոկատի վրա ու փորձեցին շրջանցել նրան թևից և թիկունք անցնել: Ի դեպ է ասել, որ Դավալուում գտնվող Լաութոնը, երբ իմացավ, որ Խալիսան թուրքաբնակ գյուղ է, գեներալ Փիրունովին առաջարկեց հայկական զորքերը հետ քաշել Խալիսայից, ինչը մերժվեց Փիրունովի կողմից: Լաութոնը, ձգտելով ընդարձակել ստեղծվելիք գեներալ-նահանգապետության սահմանները, գեներալ Փիրունովին առաջարկեց նաև հետ քաշել հայկական զորքերը Դավալուից հյուսիս՝ Յուվա, ինչպես նաև Դավալուի հայ ազգաբնակչությանը գաղթեցնել, որը նույնպես մերժվեց հայ գեներալի կողմից: Այդժամ Լաութոնը շտապեց Երևան՝ հուսալով, որ նպատակին կհասնի Հայաստանի կառավարության հետ բանակցություններում:

¹⁹ Նույն տեղում, թ. 42:

²⁰ Նույն տեղում, թ. 44:

Լաուրթնը առաջարկում է հետևյալ պայմանները. «Երկու կողմից զորքերը՝ բնավ առաջ չշարժվելով, պետք է կանգնեն այնտեղ, որտեղ կանգնած են այժմ, այսինքն մուսուլմանական զորամասերը պետք է կանգնեն Արագոյան կայարանում և Սադարակում, իսկ հայկական մասերը՝ Արաքսի ռազմաճակատում Յայջի գյուղում: Դարալագյազի ռազմաճակատում մուսուլմանները զբաղեցնում են Դանզիկ, Չիվա և Դարալագյազի Յայջի գյուղերը, իսկ հայերը՝ Արփա, Ամաղու և Խաչիկ գյուղերը»²¹: Ութ կետից բաղկացած պայմաններում խոսվում էր երկաթգծի շահագործման (յուրաքանչյուրն իր տարածքում), կողմերի միջև ազատ և անմաքս առևտրի, հեռագրագծի վերականգնման մասին և այլն:

Այս պայմանները չէին կարող չառաջացնել Հայաստանի կառավարության դժգոհությունը, և նա բուռն կերպով բողոքեց և պահանջեց փոփոխություններ կատարել նրանում: Սակայն շատ բան փոխել այդպես էլ չհաջողվեց: Ահա թե ինչ էր ասված փետրվարի 4-ին Ս. Տիգրանյանի և Լաուրթնի ստորագրած համաձայնագրում. «Հայկական կառավարությունը բրիտանական վերահսկողության տակ կկառավարի Ուվաչայ (պետք է լինի Յուվաչայ - Է. Ջ.) գետից մինչև Երևանի գավառի հին հարավային սահմանն ընկած շրջանները պայմանով, որ յուրաքանչյուր գյուղ ընտրում է իր համար ավագ և բրիտանական, այլ ոչ թե հայկական զորքերը պետք է պահպանեն օրինականությունը և կարգը: Այդ նպատակով բրիտանական զորքերի մի ջոկատ կտեղավորվի Դավալուում, իսկ հայերը հետ կքաշեն իրենց բոլոր զորքերը Ուվաչայից հյուսիս՝ բացառությամբ մի փոքրիկ ջոկատից (50 մարդ չգերազանցող), որը կմնա Դավալուում և ներկայումս չի գնա մուսուլմաններով բնակեցված գյուղերը առանց բրիտանական լիազորի կարգադրության: Երևանի կառավարությունը կվերականգնի գիծը Երևան քաղաքի և սահմանի միջև կապը պահպանելու համար»²²:

Համաձայնագիրը չունի դասական համաձայնագրի բնորոշ ձև: Ուղղակի խառը ձևով ներկայացված են կողմերի պարտավորությունները և այն էլ՝ անհաջող ձևակերպումներով: Օրինակ, ասված չէ, թե հայկական զորքերը երբ պետք է հեռանան: Այդ է պատճառը, որ կողմերը սկսեցին յուրովի մոտենալ հարցին: Անգլիացիները սկսեցին պնդել, թե հայերը պետք է անմիջապես զորքերը հետ քաշեն, իսկ հայկական կողմը պահանջում էր նախ ապահովել տեղում մնացող հայերի անվտանգությունը: Այդ հարցը, մասնավորապես, պնդեց Քաջագնունին փետրվարի 7-ին Երևան ժամանած գեներալ Ուոկերի հետ ունեցան երկարատև բանակցություններում, բայց ապարդյուն: Գնդապետ Կարաքեչիչևը փետրվարի 8-ին Երևան ուղարկած հեռագրում տեղեկացնում է, որ «անգլիական վաշտի հրամանատարը նորից հայտնում է մեր հեռանալու ժամկետի մասին և հայտնեց, որ (Դավալու) ժամանած գեներալը մեկնել է Նախիջևան: Գեներալը հաստատել է, որ ոչ մի փոփոխություն չի լինի և փետրվարի 8-ի երեկոյան պետք է թողնենք 50 մարդուց բաղկացած խումբ...»²³: Իսկ 9-ի երեկոյան հեռագրում է, թե գունդը հեռանում է փետրվարի 10-ի լուսաբացին՝ Դավալուում

²¹ Նույն տեղում: Տե՛ս նաև **Է. Ա. Զոհրաբյան**, *Աշխ.*, էջ 55:

²² «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1-2, էջ 80:

²³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 48:

թողնելով 12-րդ վաշտը շտաբս-կապիտան Տեր-Իանիսյանի հրամանատարությամբ: Ահա այսպես էր հոգ տանում Շարուր-Նախիջևանի գեներալ-նահանգապետության մասին բրիտանական հրամանատարությունը՝ նրա սահմանի վրա ստեղծելով բավականին ընդարձակ ապառազմականացված գոտի:

Հայկական գնդի հեռանալուց հետո փախած թուրքերը սկսեցին վերադառնալ իրենց գյուղերը և, նախկինից ավելի հանդուգն ու լկտի վարքագիծ դրսևորելով, ոչ միայն կազմալուծում էին հայկական քաղաքացիական վարչության աշխատանքները, այլև բացեիբաց հայտարարում, որ իրենք երբեք չեն հաշտվի հայերի հետ ու շուտով Ադրբեջանի, Մակուի ու Նախիջևանի հետ մեկտեղ պատերազմ կսկսեն Հայաստանի դեմ:

Ինչո՞վ բացատրել անգլիացիների նման վարքագիծը, ինչո՞ւ էին նրանք հանդուրժում մահմեդականների հակահայկական խժոժությունները: Եվ հետո, հասկանո՞ւմ էին արդյոք հայ քաղաքական ու պետական գործիչները բրիտանական քաղաքականության նման ելևէջներն ու շարժառիթները, թե՞ ոչ: Բոլոր փաստերը վկայում են, որ շատ լավ էլ հասկանում էին, բայց չունենալով ուրիշ մի հենարան, հակազդեցության այլ միջոցներ՝ ստիպված փարվում էին բրիտանական նեմո ու խարդախ իշխանություններին, փորձում նրանց օգնությամբ լուծել իրենց առաջ ծառայած բարդագույն խնդիրները: «Անդրկովկասի թրքությունը բրիտանական զորահրամանատարության օրով ավելի նպաստավոր պայմանների մեջ է գտնվում, քան գերման-օսմանյան հաղթական օկուպացիայի ժամանակ, – ասված է մարտի 6-ին Փարիզ Ավ. Ահարոնյանին ուղարկած մինիստր-նախագահի նամակում: – Փաստեր ու հանգամանքներ են սրանք, որոնք լուրջ մտածումների ու ծանր մտատանջությունների տեղիք են տալիս մեզ...»

Անշուշտ, **գլխավորագույն պատճառը անգլիական զինված ուժերի թուլությունն է այստեղ:** Ինչպես Գերմանիան ամռանն ու աշնանը տեղի էր տալիս թուրք հրամանատարության պահանջների ու քմահաճույքների առաջ, այնպես էլ այժմ անգլիական գեներալներն են նահանջում օսմանյան օֆիցերների այս նվաճողական ծրագիրների ու գործողությունների առաջ...: Նահանգապետությունները լոկ մի քող են, նուրբ ու թափանցիկ, որի տակից պարզ երևում է իրական թուրքական իշխանությունն ու ուժը:

Սակայն, թվում է, թե մի ուրիշ պատճառ էլ կա: **Անգլիացին չի հավատում հային՝ ավանդաբար համարելով նրան անուղղելի ռուսասեր, ռուսական օրիենտացիայի անհողդողդ հետամտող...:** Այս վերաբերմունքն է, որ տրամադրում է բրիտանական զորահրամանատարությանը չնպաստել մեր ուժերի կազմակերպմանն ու զորեղացմանը թրքության դեմ Անդրկովկասում, որովհետև թուրքն է նրա աչքում ամենավստահելի պատվարը Ռուսաստանի դեմ այստեղ: Նա զիջում էր մեզ Կարսը, բայց հենց որ տեսավ, որ այստեղ ավելի վստահելի և ոչ աննշան հակառուսական ուժ կա հանձին թրքության, իսկույն շտապեց ուղղել իր այդ սխալը, Կարսը տվեց թուրքերին... և ոչ միայն Կարսը»²⁴ (ընդգծումները մերն են - Է. Ջ.):

²⁴ Նույն տեղում, գ. 193, թ. 64:

Այո՛, և ոչ միայն Կարսը, այլև Շարուր-Նախիջևանը նմանապես: Ուղղակի վերը նշված պատճառների շարքում պետք է ավելացնել ևս մեկը՝ նավթը, Բաքվի նավթը: Նավթը այն հեռավոր ժամանակներում (ինչպես և ներկայումս) քաղաքական աշխարհում կարևոր դեր ունեւր, որը անգլիացիները հաշվի չառնել չէին կարող:

Անգլիայի քաղաքականությունն Անդրկովկասում իսկապես որ չի կարելի որակել այլ կերպ, քան թուրքամետ: Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում նրա դիրքորոշումը, մեծ Ադրբեջան ստեղծելու նրա ձգտումը դրա վառ ապացույցն են: Եվ եթե ապրիլին Թոմսոնը ի վերջո համաձայնեց, որ Կարսը և Նախիջևանը միացվեն Հայաստանին, ապա դա կատարվեց ոչ այն բանի համար, որ վերջինս ամրապնդվի ու հզորանա, այլ ուղղակի հարկադրեցին հանգամանքները, որոնցից էին, օրինակ, հակահայկական խժոժություններին (թալան ու սպանություններ) վերջ տալու և կարգն ու անվտանգությունն ապահովելու բրիտանական հրամանատարության անկարողությունը, անգլիական զինվորների տրտունջն ու դժգոհությունը, Նախիջևանի վրայով Ադրբեջանի և Թուրքիայի միավորման վտանգի մատնանշումը Հայաստանի ղեկավարության կողմից և այլն:

Ինչևէ, Կարսի մարզը Հայաստանին հանձնելու մասին գեներալ Թոմսոնի հրահանգների կապակցությամբ արդեն ծանոթացանք նաև Նախիջևանի շրջանի կառավարումը Հայաստանին հանձնելու մասին կետերին: Ուստի կրկնությունից խուսափելու նպատակով չանդրադառնանք դրանց, այլ ուղղակի ավելացնենք, որ թեև մայիսի 1-ին հայկական զորքերը պետք է շարժվեին Նախիջևան, բայց դա տեղի ունեցավ մայիսի 5-ին (Թոմսոնը պահանջել էր, որ նախ Ղարաբաղը ընդունի Ադրբեջանի գերիշխանությունը, կապիտան Արսեն Շահմազյանին հետ կանչի Ջանգեզուրից և բացի արոտավայրերի ճանապարհը քոչի համար):

Չորքին հետևեց նաև գաղթականությունը: Մայիսին մի քանի հազար գաղթականներ արդեն Շարուրում և Նախիջևանում էին: Դրանք մեծ մասամբ սովահար, առանց գույքի, անասունների և ապրուստի այլ միջոցների մարդիկ էին, որոնց անհրաժեշտ էր ապահովել հողով, տուն ու տեղով, ապրուստի միջոցներով առաջիկա երկու-երեք ամիսների համար: Շարուր-Նախիջևանում ընդհանուր տեսուչ Արամ Մակարյանի կազմած տեղեկագրից իմանում ենք, որ մինչև մայիսի 28-ը խնամատարության նախարարությունը իր սուղ միջոցների հաշվին երկրամասում բացել է հիվանդանոց, գործարկել ջրաղաց, ալրաղաց, բացել մի քանի սննդատու կայաններ Բաշ-Նորաշենում, Խանլուխլարում, Նախիջևանում և այլն: Հետաքրքրական է, որ այդ ամենը՝ ոչ միայն հայերի, այլև թուրքերի համար: Ճիշտ է, այդ օգնության չափերը մեծ չէին, կարելի է ասել շատ չնչին էին. օրական տրվում էր 1,5 ֆունտ հաց և 1 ձուկ, բայց լայնապես փրկություն էր սովամահությունից:

ЭДИК ЗОГРАБЯН – Турецко-татарская (азербайджанская) анти-армянская деятельность в первые месяцы 1919 г. и британское командование на Кавказе. – Воспользовавшись 11-й статьёй Мудросского перемирия, согласно которой турецкие войска эвакуировались из Закавказья лишь до границ, указанных в Брестском договоре, Турция сформировала в Карсе и Шарур-

Нахичевани местные правительства. Целью шага было не допустить присоединения этих стратегически важных территорий к Республике Армения.

В декабре 1918 г. возникла т. н. Карсская шура, или „Юго-западная республика”, а в начале января 1919-го в Карсе учредили английское военное губернаторство. При нём должно было функционировать армянское гражданское управление. Однако когда его сотрудники прибыли в город, турецкие и татарские агитаторы спровоцировали протестные митинги. Вместо того чтобы обуздать толпу, военный губернатор полковник Темперлей предложил сотрудникам армянского управления удалиться в Александрополь. В Шаруре и Нахичевани учредили Араксинскую республику; вскоре англичане подписали с правительством Армении соглашение, по которому это политическое новообразование стало английским генерал-губернаторством, а юго-восток Эриванского уезда (от Волчьих ворот до Давалу включительно) – нейтральной зоной.

В конце апреля англичане передали Карс и Шарур-Нахичевань Армении. Туда вступили армянские войска, за ними вернулись и беженцы. Причём в Шаруре и Нахичевани успела обосноваться только небольшая их часть (пять–шесть тысяч из тридцати пяти), когда во второй половине июля вспыхнуло антиармянское восстание.

EDIK ZOHREBYAN – *Turkish-Tatar (Azerbaijani), Anti-Armenian Activities in the First Months of 1919 and the British Command in the Caucasus.* – The paper shows that after signing the Mudros Armistice, Turkey took advantage of the fact that the 11th article said that Turks evacuated Transcaucasia before the Treaty of Brest, and the remaining part, according to the study of local representatives of Allies and on their proposal, formed local governments in Kars and Sharur-Nakhichevan. The purpose of these new formations was to prevent the annexation of these strategically important areas of the Republic of Armenia.

The so called "Kars Shura" or "South-Western Republic" was formed in Kars in December. At the beginning of January British general Walker in Alexandropol signed an agreement with the Foreign Minister of Armenia S. Tigranyan about the establishment of British Military Governorship in Kars where there would be Armenian civilian governance. However, when the Armenians took control of Kars, political meetings and protests with threats to the representatives of Armenia were organized by Turk and Tatar agitators.

Military governor of Kars Colonel Temperley, instead of curbing the Muslims, offered the members of Armenian administration to retire to Alexandropol. So the first attempt to establish Armenian administration in Kars ended in failure. It was only late in April, that due to the changed circumstances, by the order of General Thomson, the members of Shura were arrested and the area was annexed to Armenia. On April 23, Armenian troops entered Kars, and the refugees followed them.

After the withdrawal of Turkish troops from Sharur and Nakhichevan there were formed Arazdayan and Nakhichevan Republics, which were later merged into Araksyan Republic. Upon completion of the Armenian-Georgian war, the Armenian forces were concentrated in Davalu for the entry into Sharur and Nakhichevan. However, the leaders of the Araksyan Republic resorted to a diplomatic trick: they appealed to the Armenian

government and asked for 8-10 days' time to prepare the population for a peaceful acceptance of the Armenian governance. Later it became clear that this time it was necessary for them to appeal to the British Command with a request to prevent the entry of the Armenian forces to Sharur and Nakhichevan. On January 19, the British mission visited Nakhichevan, which was followed by a truce in which they laid claim to Armenian troops that they should not move farther than Davalu. And on February 4, they signed an agreement with the Armenian government according to which Sharur and Nakhichevan were turned to the British governor-generalship and the south-eastern part of Yerevan District (from the Wolf gate to Davalu) was turned to a neutral zone.

Late in April, by General Thomson's order not only Kars, but Sharur-Nakhichevan was also given to Armenia. Early in May, Armenian troops entered Sharur-Nakhichevan and the refugees (5-6 thousand out of 35, 000), who barely had time to become stronger in their places, followed them, as anti-Armenian revolt broke out in the second half of July.